Արձանագրություն N 3

ՀՀ առողջապահության նախարարության 2018 թվականի կարիքների համար անհրաժեշտ համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/20» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «21» «Մայիսի» 2018թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Գ.Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ	Գ.Պողոսյան Մ.Մխիթարյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ.Մնացականյան

1. Հայաստանի Հանրապետության ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին

(Գ.Հարությունյան)

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ:

Հարցման եզրակացությունը ստացվել է 14.05.18թ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2.Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Գ.Հարությունյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշվել էր առաջարկել «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Ընթացակարգի ամփոփման մասին

(Գ.Հարությունյան)

Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը.

1. Որոշվեց «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/20» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և հաղթող ճանաչել՝ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին՝ 690.000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը, որոշվեց «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/20» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետ սահմանել 2018 թվականի մայիսի 22-ից մինչև մայիսի 26-ը ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Գ.Հարությանյան

Անդամներ՝ _____ Գ.Պողոսյան

_____ Մ.Մխիթարյան

Քարտուղար՝ _____ Հ. Մնացականյան